ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
25.01.2024 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
*«ԽՈՒԼԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»*
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԽՈՒԼԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 02552198 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ Փ. 94/4 |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.03372 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2005-06-15 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)94547175 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | 25nata07@mail.ru |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ԳՐԻԳՈՐ | Ազգանունը<br>ԳՐԻԳՈՐՅԱՆ | Պաշտոնը<br>ՆԱԽԱԳԱՀ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| 1.1 ներգրավել Հայաստանի Հանրապետության  խուլ քաղաքացիներին սպորտային շարժման մեջ | | |
| 1.2 ձևավորել խուլ քաղաքացիների սպորտի առավելագույնս բարձր արդյունավետ և վերականգնողական առողջարարական համակարգ | | |
| 1.3 նպաստել խուլերի շրջանում միջազգային տուրիզմի զարգացմանը | | |
| 1.4 նպաստել իր անդամների համակողմանի զարգացմանը, առողջ կենցաղավարության տարածմանը և ամրապնդմանը | | |
| 1.5 կազմակերպել և ղեկավարել սպորտային աշխատանքներ իր անդամների շրջանում | | |
| 1.6 աջակցել սպորտային կազմակերպություններին և սպորտի բնագավառում պետական մարմիններին՝ առաջարկելով նրանց վերականգնողական և զարգացման ծրագրեր ինչպես նաև աջակցել խուլ և առողջ քաղաքացիների սպորտային նվաճումների համադրմանը | | |
| 1.7աջակցել խուլ քաղաքացիների սոցիալական և սպորտային վերականգնմանը | | |
| 1.8նպաստել բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործմանը օլիմպիական խաղերում, Եվրոպայի, աշխարհի առաջնություններում ու միջազգային այլ մրցաշարերում հանրապետության հավաքական թիմերի հաջող մասնակցության ապահովմանը | | |
| 1.9ապահովել խուլերի մասնակցությունը հանրապետական և միջազգային սպորտային շարժման մեջ | | |
| 1.10իրականացնել պարապմունքների կազմակերպչական և մեթոդական մասերի ապահովումը, կազմակերպել մարզիկների, մարզչական կազմի կատարելագործումը մրցույթների, ատեստացիաների, սեմինարների անցկացման միջոցով | | |
| 1.11նպաստել մարզիկների սոցիալական ապահովվածության և առողջության պահպանման միջոցառումների  իրականացմանը | | |
| 1.12նյութական և սոցիալական օգնություն ցույց տալ վետերան մարզիկներին և սպորտային շարժման առաջնորդներին | | |
| 1.13իրականացնել իր անդամների իրավունքների և շահերի պաշտպանությունը, | | |
| 1.14վերլուծել մրցումների արդյունքները, անհրաժեշտության դեպքում քննարկել                    գանգատները  և վիճելի հարցերի կապակցությամբ ընդունել որոշումներ | | |
| 2 Կազմակերպությունը կարող է իրականացնել իր նպատակներին առնչվող ՀՀ գործող օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն: | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 2 |
| 4.2 Կամավորների թիվը | | 29 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | 2 |
| **6 Իրականացված ծրագրեր՝** | | |

Digitally signed by
ALEKSANYAN
NATALIA
7507360333
Date: 2024.03.15
14:58:26 AMT

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ շախմատի պատանիների առաջնություն | քԵրևան | ստուգել մարզական պատրաստվածության | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | ձյուդոյի Եվրոպայի առաջնությունն | Բուլղարիա | Ավարտված | հայ մարզիկների ներգրավումը միջազգային կառույցներում | դրական |
| 2 | աշխարհի ըմբշամարտի առաջնություն | Ղրղզստան | Ավարտված | հայ մարզիկների ներգրավումը միջազգային կառույցներում | դրական |
| 3 | ՀՀ շախմատի առաջնություն | քԵրևան | Ավարտված | ստուգել մարզական պատրաստվածության աստիճանը | դրական |
| 4 | ՀՀ հունահռոմեական ոճ ըմբշամարտի առաջնություն | քԵրևան | Ավարտված | ստուգել մարզական պատրաստվածության աստիճանը | դրական |
| 5 | ՀՀ ազատ ոճ ըմբշամարտի առաջնություն | քԵրևան | Ավարտված | ստուգել մարզական պատրաստվածության աստիճանը | դրական |
| 6 | Ուսումնամարզական հավաք՝ ըմբշամարտի գծով | քԾաղկաձոր | Ավարտված | ստուգել մարզական պատրաստվածության աստիճանը | դրական |
| 7 | Ուսումնամարզական հավաք՝ ըմբշամարտի գծով | քԵրևան | Ավարտված | ստուգել մարզական պատրաստվածության աստիճանը | դրական |
| 8 | Ձմեռային սուրդլիմպիկ խաղեր | Թուրքիա, Էրզրում | Ընթացքի մեջ | ընթացքի մեջ | ընթացքի մեջ |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 36,924,941 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 36,924,941 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 34,586,820 | ԿԳՄՍ նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 34,586,820 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 24,351,036 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 24,351,036 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 21,908,731 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 21,908,731 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

Քանի որ խուլերի ձմեռային սուրդլիմպիկ խաղերը կայանալու են 2024թ-ի մարտ ամսին, ուստի ԿԳՄՍ նախարարության հետ, հաստատված փոխադարձ համաձայնագրերով, 12 614 320 դրամը կօգտագործվի ձմեռային սուրդլիմպիկ խաղերին մասնակցելու համար և այն կարտացոլվի 2024թ-ի հաշվետվություններում

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________12________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Audit ARMENIA

# «ԽՈՒԼԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

01.01.2023-31.12.2023թթ. ժամանակաշրջանի համար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՎՀՀ - 01569467

Audit ARMENIA

«Audit Armenia»
Closed Joint Stock Company
«Аудит Армения»
Закрытое Акционерное Общество
TIN / ИНН - 01569467

(012) 66 66 66 (055) 66 06 35 www.auditarmenia.am info@auditarmenia.am www.facebook.com/auditarmenia

0012, ՀՀ. ք.Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12, 5-րդ հարկ

# Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին**

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» Հասարակական Կազմակերպության 2023թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ (այսուհետև Հաշվետվություն):

Մեր կարծիքով, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2023թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար «Հասարակական Կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

## Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

## Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

15 մարտի 2024թ.

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտոր



Scanned with CamScanner

## *«ԽՈՒԼԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ» ՀԿ*

## *ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Խուլերի Հայկական Սպորտային Կոմիտե» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) գրանցվել է 2005թ հունիսի 15-ին, գրանցման համար՝ 211.171.03372:

Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

1. Ներգրավել ՀՀ խուլ քաղաքացիներին սպորտային շարժման մեջ
2. Ձևավորել խուլ քաղաքացիների սպորտի առավելագույնս բարձր արդյունավետ և վերականգնողական առողջարարական համակրգ
3. Նպաստել խուլերի շրջանում միջազգային տուրիզմի զարգացմանը
4. Նպաստել իր անդամների յամակողմանի զարգացմանը, առողջ կենցաղավարության տարածմանը և ամրապնդմանը
5. Կազմակերպել և ղեկավարել սպորտային աշխատանքներ իր անդամների շրջանում
6. Աջակցել սպորտային կազմակերպություններին և սպորտի բնագավառում պետական մարմիններին՝ առաջարկելով նրանց վերականգնողական և զարգացման ծրագրեր ինչպես նաև աջակցել խուլ և առողջ քաղաքացիների սպորտային նվաճումների համադրմանը
7. Աջակցել խուլ քաղաքացիների սոցիալական և սպորտային վերականգնմանը
8. Նպաստել բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործմանը օլիմպիական խաղերում, Եվրոպայի, աշխարհի առաջնություններում ու միջազգային այլ մրցաշարերում հանրապետության հավաքական թիմերի հաջող մասնակցության ապահովմանը
9. Ապահովել խուլերի մասնակցությունը հանրապետական և միջազգային սպորտային շարժման մեջ
10. Իրականացնել պարապմունքների կազմակերպչական և մեթոդական մասերի ապահովումը, կազմակերպել մարզիկների, մարզչական կազմի, կատարելագործումը մրցույթների, ատեստացիաների, սեմինարների անցկացման միջոցով
11. Նպաստել մարզիկների սոցիալական ապահովվածության և առողջության պահպանման միջոցառումների իրականացմանը
12. Նյութական և սոցիալական օգնություն ցույց տալ վետերան մարզիկներին և սպորտային շարժման առաջնորդներին
13. Իրականացնել իր անդամների իրավունքների և շահերի պաշտպանությունը
14. Վերլուծել մրցումների արդյունքները, անհրաժեշտության դեպքում քննարկել զանգատները և վիճելի հարցերի կապակցությամբ ընդունել որոշումներ

Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1 մարդ (2022թ՝ 1 մարդ):

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Էրեբունի թաղամաս, Դավիթ Բեկի փ. 94/4:

### Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային Ընկերությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ իրադարձությունը Ծրագրի իրականացման ընթացքում որոշակի դժվարություններ է ստեղծել:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1. Համապատասխանություն

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին, ծախսերը ճանաչվում են վճարման պահին:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը: Սույն Ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է հայկական դրամով:

2.3 Ֆինանսավորում

Պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության գումարները տրամադրվել են ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշման համաձայն:

## 3.Իրականացված ծրագրեր

*Ծրագրի ֆինանսավորումը*

Ծրագիրը իրենից ներկայացնում է 2023 թվականի հունվարի 30-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վահրամ Գասպարյանի և «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի միջև կնքված պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում աջակցություն հասարակական կազմակերպություններին իրականացման համար տրամադրված դրամաշնորհի: Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 36,409 հազ. դրամ::

### 3.1. Ուսումնամարզական հավաք /Ծաղկաձոր/

*Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը*

*Համառոտ բովանդակություն*՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, միջազգային մրցումների մասնակցության նախապատրաստում, շուրջ 10 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. հունիսի 30-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Ծախսեր կատարված պետ,աջակց,/ հազ.դրամ | Ծախսեր կատարված ԽՀՄԿ-ի հաշվին/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ |
|---|---|---|---|---|
| Հյուրանոցային ծառայություն | 686 | 686 | - | 686 |
| **Ընդամենը** | 686 | 686 | - | 686 |

### 3.2 *Ուսումնամարզական հավաք 2 /Օլիմպավան/*

*Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը*

*Համառոտ բովանդակություն*՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, միջազգային մրցումների մասնակցության նախապատրաստում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, շուրջ 18 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. սեպտեմբերի 30-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|
| Ուսումնամարզական հավաքի կազմակերպում | 1,294 | 1,294 | - |
| Ընդամենը | 1,294 | 1,294 | - |

### 3.3 Խուլերի ձյուղրյի Եվրոպայի առաջնություն

*Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը*

*Համառոտ բովանդակություն* ՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, 2 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. հունիսի 30-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|
| Ճանապարհածախս/մասնակցություն/ ապահովագրություն | 1,500 | 1,121 | 379 |
| Գիշերավարձ | 310 | 310 | - |
| Օրապահիկ | 310 | 458 | (148) |
| **Ընդամենը** | **2,120** | **1,889** | **231** |

Գրության համաձայն 231 հազ.դրամ գումարը ուղղվել է աշխարհի առաջնության ծախսերի համար:
Եվրոպական միջ.կազմ.տարեկան անդամավճարը՝231 հազ.դրամը, Կազմակերպությունը վճարել է իր միջոցներով:

### 3.4 ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն

Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը

Համառոտ բովանդակություն ՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, շուրջ 18 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. մարտի 31-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|
| Դրսի մասնակիցների ճանապարհածախս | 18 | 27 | (9) |
| Դրսի մասնակիցների գիշերավարձ | 18 | 21 | (3) |
| Մասնակիցների օրապահիկ | 108 | 60 | 48 |
| Մասնակիցների օրապահիկ պատանիներ | - | 33 | (33) |
| Մարզիչ | 15 | 15 | - |
| Մրցավարներ | 15 | 15 | - |
| Պարգևատրում | 325 | 325 | - |
| Դահլիճի վարձակալություն | 80 | 80 | - |
| Գրենական պիտույքներ | 14 | 17 | (3) |
| **Ընդամենը** | **593** | **593** | - |

### 3.5 Հունահռոմեական ոճի ըմբշամարտ

Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը

Համառոտ բովանդակություն ՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, շուրջ 18 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. մարտի 31-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|
| Դրսի մասնակիցների ճանապարհածախս | 18 | 27 | (9) |
| Դրսի մասնակիցների գիշերավարձ | 18 | 21 | (3) |
| Մասնակիցների օրապահիկ | 108 | 60 | 48 |
| Մասնակիցների օրապահիկ պատանիներ | - | 33 | (33) |
| Մարզիչ | 15 | 15 | - |
| Մրցավարներ | 15 | 15 | - |
| Պարգևատրում | 325 | 325 | - |
| Դահլիճի վարձակալություն | 80 | 80 | - |
| Գրենական պիտույքներ ինվոյսում տպագրական ծառայություն | 14 | 17 | (3) |
| **Ընդամենը** | **593** | **593** | - |

**3.6 Խուլերի շախմատի 17-րդ առաջնություն**

Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը

Համառոտ բովանդակություն՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, շուրջ 26 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. մարտի 31-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Կատարված Աղասի Ինանցից ստ.օգն.հաշվին | Կատարված ԽՀՍԿ-ի հաշվին |
|---|---|---|---|---|
| Դրսի մասնակիցների ճանապարհածախս | 20 | 6 | - | - |
| Դրսի մասնակիցների ճանապարհածախս | - | 30 | - | 12 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դրսի մասնակիցների գիշերավարձ | 70 | 60 | - | - |
| Մասնակիցների օրապահիկ | 216 | 270 | - | - |
| Մարզիչների օրապահիկ | 15 | 15 | - | - |
| Մրցավարների օրապահիկ | 23 | 23 | - | - |
| Պարգևատրում | 65 | 65 | 15 | - |
| Դահլիճի վարձակալություն | 120 | 60 | - | - |
| Դիպլոմներ | 11 | 11 | 3 | 7 |
| **Ընդամենը** | **540** | **540** | **18** | **19** |

### 3.7 Խուլերի Աշխարհի առաջնություն /Ղրղզստան/

Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը

Համառոտ բովանդակություն՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում 14 մարզիկի, 3 մարզիչի, 1 թարգմանիչի, 1 ղեկավարի մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. հունիսի 30-ն էր:

*Ծախսերի ամփոփ նկարագիրը*

| Ծախսեր | Նախահաշիվ/ հազ.դրամ | Փաստացի/ հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|
| Ճանապարհածախս | 9,924 | 7,068 | 2,856 |
| Օրապահիկ գիշերավարձ 1 մարդ | 980 | 923 | 57 |
| Օրապահիկ գիշերավարձ 8 մարդ | 4,575 | 4,097 | 478 |
| Օրապահիկ գիշերավարձ 9 մարդ | 899 | 4,226 | (3,327) |
| **Ընդամենը** | 16,378 | 16,314 | 64 |

25.09.2023թ. 64 հազ.դրամը վերադարձվել է:

### 3.8 Խուլերի ձմեռային սուրդլիմպիկ խաղեր /թիմային շախմատ/

Ծրագրի բովանդակությունը և գործառույթների նկարագիրը

Համառոտ բովանդակություն՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի կատարող՝ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ
Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը՝ «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ»

*Ծրագրի արդյունքը*

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում, շուրջ 8 մարդու մասնակցության ապահովում:

*Ծրագրի գործողության ժամկետները*

Համաձայն պայմանագրի ծրագրի գործողության վերջնաժամկետը 2023թ. դեկտեմբերի 31-ն էր:

Քանի որ խուլերի ձմեռային սուրդլիմպիկ խաղերը կայանալու են 2024թ-ի մարտ ամսին, ուստի ԿԳՄՍ նախարարության հետ, հաստատված փոխադարձ համաձայնագրերով, 12 614 հազ.դրամը կօգտագործվի ձմեռային սուրդլիմպիկ խաղերին մասնակցելու համար և այն կարտացոլվի 2024թ-ի հաշվետվություններում:

**<u>Ծախսերի ամփոփ նկարագիրը</u>**

| N | Իրականացվելիք միջոցառման անվանումը | Ըստ Նախահաշվի /հազ.դրամ | Փաստացի ծախսված գումար /հազ.դրամ | Չօգտագործված գումար/հազ.դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ Շախմատի առաջնություն | 540 | 540 | - |
| 2 | ՀՀ հունա-հռոմեական ըմբշամարտի առաջնություն | 593 | 593 | - |
| 3 | ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն | 593 | 593 | - |
| 4 | ՀՀ ուսումնամարզական հավաք ըմբշամարտի գծով | 686 | 686 | - |
| 5 | ՀՀ ուսումնամարզական հավաք ըմբշամարտի գծով | 1,294 | 1,294 | - |
| 6 | Խուլերի Եվրոպայի առաջնություն /ձյուղո մեծահասակներ/ | 1,889 | 1,889 | - |
| 7 | Խուլերի Աշխարհի առաջնություն /ըմբշամարտ մեծահասակներ/ | 16,378 | 16,314 | 64 |
| 8 | Խուլերի ձմեռային սուրդլիմպիկ խաղեր /թիմային շախմատ/ | 14,436 | - | 14,436 |
| **Ընդամենը** | | **36,409** | **21,909** | **14,500** |

Ըստ նախահաշվի գումարը կազմում է 36,409 հազ.դրամ, սակայն Կազմակերպությունը ստացել է 34,587 հազ.դրամ, որից ծախսել է 21,909 հազ.դրամ:
25.09.2023թ. 64 հազ.դրամը վերադարձվել է բյուջե:

Քանի որ խուլերի ձմեռային սուրդլիմպիկ խաղերը կայանալու են 2024թ-ի մարտ ամսին, ուստի ԿԳՄՍ նախարարության հետ, հաստատված փոխադարձ համաձայնագրերով, 12 614

հազ.դրամը կօգտագործվի ձմեռային սպորտային խաղերին մասնակցելու համար եւ այն կարտացոլվի 2024թ-ի հաշվետվություններում:

ՀԿ Նախագահ Գրիգոր Գրիգորյան

15 մարտի 2024թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 15.03.2024 14:56

Scanned with CamScanner